ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 060 88 77 77 araks.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2026 թվականի N 180-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16–ի N 85-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 17–րդ ենթակետը և Ա/Ձ Արթուր Ալեքսանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել Ա/Ձ Արթուր Ալեքսանյանին Արմավիրի մարզի Արաքս համայնք Գայ գյուղի վարչական տարածքում 2026 թվականի 1-ին եռամսյակին կազմակերպել և իրացնել հանրային սնունդ:
2.Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 16–ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 85-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1–ին կետի 17–րդ ենթակետի համաձայն:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2026թ. փետրվարի 27
Արաքս համայնք